ՆՎԱՐԴ ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՍՏՂԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ավանդութային պատկերացումների առումով կարևոր գործոն է ժամանակի ճիշտ հատվածավորումը, որ տնտեսական զբաղմունքների հերթագայման և դրանց բարեհաջողությունն ապահովող ծիսա-հմայական արարողությունների հիմնական գրավականն էր: Դիցաբանական տիեզերքի և դրա տարրերի, տվյալ դեպքում՝ համաստեղությունների և աստղերի ,,գործունեության ոլորտը,, գիշեր-այգաբաց ժամանակահատվածն է արևի օրապտույտի ընթացքում: Այսպիսով, գիշերային երկնակամարում համաստեղությունների և աստղերի երևան գալը ժամանակա-տարածական ուղեցույց է բոլոր մշակույթներում:

2. Համաստեղությունների և աստղերի հետ առնչվող հայկական ժողովրդագիտական նյութերը ուսումնասիրելիս պարզվում է, որ հիմնականում գրավոր աղբյուրներից և դաշտային նյութերից մեզ հայտնի գրեթե բոլոր համաստեղությունները /Հայկ-Օրիոն, Բազումք, Մեծ Արջ, Քարվան-Նորուս, Լուսո Աստղ, Կշեռք և այլն/ ազդակ-խորհրդանիշ են եղել ինչպես տարվա եղանակների ժամանակային տարաբաժանման, այնպես էլ տվյալ օրվա հետ կապված աշխատանքներն սկսելու համար /օր.՝ Ծամփա գնալիս կողմնորոշվելը թե ժամանակի և թե տարածության մեջ/:

3. Ուշագրավ է, սակայն, որ Հարդագողի Ճանապարհ /Ծիր կաթին/ համաստեղության մասին եղած տվյալներից ոչ մեկը չի կապվում ժամանակի ժողովրդական ընկալման հետ: Մեզ հայտնի բոլոր /գրավոր և դաշտային/ տարբերակները նկարագրում կամ բացատրում են այն իբրև ,,հետք,, , տարբեր պատճառներով առաջացած երկնային Ճանապարհ: Նույնատիպ են այն ընկալում նաև այլ մշակույթներում, որ որոշ ուսումնասիրողների հիմք է տվել Հարդագողի Ճանապարհը սահմանել իբրև հորիզոնական ուղի տիեզերքի կառուցվածքի հնագույն մոդելի մեջ:

ԱՍՏՂԻԿ ԽՍՐԱՑԵԼՅԱՆ

ՀԱԶՈՑ ԵՐԿԱԹԵ ԵՎ ՊՈՂՊԱՏԵ ՀՄԱՅԱԿԱՆ ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐԸ

/ XIX - XX ԴԴ./

1. Հայկական ժողովրդական հավատալիքներում դարեր շարունակ մեծ տեղ է տրվել երկաթի ու պողպատի գերբնական զորությանը, դրանցից սարքված զենքերին, գործիքներին, կենցաղային զանազան առարկաներին վերագրելով չար ոգիներին, հիվանդությունները, չար աչքը վանելու մոգական ուժ: